

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ 2014Թ. ԵՎ 2015Թ. ՏԱՐԵԿԱՆ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

1. ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մարզն ընդգրկում է Գուգարքի, Ստեփանավանի, Սպիտակի, Թումանյանի և Տաշիրի տարածաշրջանները՝ 113 համայնքներով (8-ը՝ քաղաքային և 105՝ գյուղական): Բնակչությունը 01.09.2015թ.-ի դրությամբ կազմում է 226.2 հազար մարդ, որից 133.1 հազ. քաղաքաբնակ (58.8%), 93.1 հազ.՝ գյուղաբնակ (41.2%):

Մարզում 2014թ.-ի ընթացքում թողարկվել է 69,938.1 մլն դրամի (ընթացիկ գներով) *արդյունաբերական արտադրանք*, որը կազմել է հանրապետությունում արտադրված արտադրանքի 5.4%-ը: Ընդհանուր առմամբ վերջին հինգ տարիների ընթացքում մարզում արտադրված արդյունաբերական արտադրանքը կազմել է հանրապետությունում արտադրված արդյունաբերական արտադրանքի 5.4-7.3%-ը (տես՝ *հավելված 1*): 2014թ.-ի ընթացքում արդյունաբերական արտադրանքի ծավալները նախորդ տարվա հետ համադրելի գներով համեմատելիս աճի տեմպը նվազել է կազմելով՝ 98.4%: Մասնավորապես մշակող արդյունաբերության աճի տեմպը կազմել է 97.6%, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարմանը՝ 80.5%, իսկ աճ է գրանցվել ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման ոլորտում՝ 108.6% և հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտում՝ 116.6% (*տես՝ հավելված 1.1*):

2015թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում թողարկվել է 88,847.3 մլն դրամի (ընթացիկ գներով) *արդյունաբերական արտադրանք*, որը կազմել է հանրապետությունում արտադրված արտադրանքի 9.4%-ը (տես՝ *հավելված 2*): 2015թ.-ի 9ամսում արդյունաբերական արտադրանքի ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համադրելի գներով համեմատելիս աճի տեմպը կազմել է՝ 194.4%: Մասնավորապես հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման արդյունաբերական աճի տեմպը կազմել է 6.8 անգամ, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարմանը՝ 130.5%, մշակող արդյունաբերությանը՝ 106.9% ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակմանը՝ 103.3% (*տես՝ հավելված 2.1*):

Բոլոր աղբյուրներով մարզում 2014թ.-ի ընթացքում իրականացվել է 42,292 մլն դրամի *շինարարություն*: 2014թ.-ին իրականացված շինարարությունը կազմել է հանրապետական ցուցանիշի 9.8%-ը, իսկ մարզի շինարարության ծավալները համադրելի գներով 2013թ.-ի նկատմամբ կազմել են 112.6% (*տես՝ հավելված 3*): 2015թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում մարզում իրականացվել է 17,108.6 մլն. դրամի (ընթացիկ գներով) կապիտալ ներդրումներ, որը կազմում է հանրապետությունում հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում իրականացված կապիտալ ներդրումների 6,6%-ը, իսկ համադրելի գներով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 79.2%-ը (տես՝ *հավելված 4*):

Մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը 2014թ.-ին կազմել է 73.8 մլրդ դրամ, որը հանրապետության գյուղատնտեսության արտադրանքի համախառն ծավալի 7.4%-ն է (2013թ.-ի համապատասխան ցուցանիշից ավելի է 6.3 մլրդ դրամով), ընդ որում աճը հիմնականում պայմանավորվել է անասնապահության զարգացման հաշվին (2013-14թթ. տեղեկատվությունը և համեմատականը մարզերի հետ՝ *հավելված 5-ում*):

1.1. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2015թ.-ի ընթացքում մարզում ՀՀ պետական բյուջեի և մի քանի այլ աղբյուրների միջոցների հաշվին ճանապարհաշինության, առողջապահության, կրթության, մշակույթի և սպորտի բնագավառներում իրականացվել են շուրջ 11,438.5մլն դրամի ներդրումներ, որից ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ շուրջ՝ 3637.2 մլն. դրամի աշխատանքներ: 2015թ.-ին վերոնշյալ բնագավառներում իրականացված ներդրումները մեկ շնչի հաշվով կազմել է 50.6հազ. դրամ (տես՝ *հավելված 6*):

ՀՀ կառավարության 02.07.2015 թիվ 766-Ն որոշումով Լոռու մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների իրականացման համար մարզպետարանին հատկացվել է 485,0 մլն դրամ:

Նշված միջոցներով իրականացվել է.

1. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում - 5 համայնքում, 133.474 մլն դրամի, 13 շենքեր, այդ թվում Վանաձոր համայնքում՝ 50,55 մլն դրամի - 5 շենքեր, Ստեփանավան համայնքում՝ 10,16 մլն դրամի - 1 շենք, Ալավերդի համայնքում՝ 43,3 մլն դրամի - 3 շենքեր, Տաշիր համայնքում՝ 24,384 մլն դրամի - 3 շենքեր, Ձորագետ համայնքում՝ 5,08 մլն դրամի - 1 շենք:

2. Նախադպրոցական ուսումնական հաստատություններ - 3 մանկապարտեզ 66,062 մլն. դրամի, այդ թվում՝ Լեռնապատ համայնքում նոր շենքի կառուցում 43.71 մլն. դրամի, Ալավերդի համայնքի թիվ 6 մանկապարտեզում կառուցվել է ջեռուցման համակարգ՝ 11,176 մլն. դրամի, Մեծավան համայնքի մանկապարտեզում կատարվել են սան.հանգույցների վերանորոգում, արտաքին հարդարում և բարեկարգում՝ 11,176 մլն. դրամի:

3. Համայնքային կենտրոններ - 7 համայնք, 102,344 մլն. դրամի, այդ թվում Լեռնանցք համայնքում նոր շենքի կառուցում՝ 42,4 մլն. դրամի, Բովաձոր, Յաղղան, Արևածագ, Չկալով, Աքրիի և Դեբեդ համայնքների համայնքային կենտրոններում կատարվել են հիմնանորոգման աշխատանքներ:

4. Փողոցների լուսավորություն - Գարգառ, Շնող և Մղարթ համայնքներում՝ 19.312 մլն. դրամի:

5. Մշակութային օբյեկտներ - 5 համայնք, 55.928 մլն. դրամի, այդ թվում՝ Ահնիձոր և Գոգարան համայնքների հանդիսությունների սրահների կառուցում՝ 15,248 մլն. դրամի, Օձուն համայնքի արվեստի դպրոցի վերանորոգում՝ 22,9 մլն. դրամի, Կարմիր Աղեկ համայնքի ակումբի վերանորոգում՝ 4,572 մլն. դրամի, Ծաթեր համայնքի հանդիսությունների սրահի վերանորոգում՝ 13,208 մլն. դրամի:

6. Մարզական օբյեկտներ - 1 համայնք, 5.3 մլն. դրամի՝ Վանաձոր համայնքի «Հայաստան» մարզապալատի հատակների վերանորոգում :

7. Այլ օբյեկտներ - 1 օբյեկտ, 5.0 մլն. դրամի՝ Սպիտակ համայնքում հենապատի վերանորոգում:

8. Սուբվենցիաներ համայնքներին - 13 համայնք, 97.5 մլն. դրամի:

ՀՀ պետական բյուջեով 2015թ. ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացվել է 470,84 մլն. դրամ, որով իրականացվել է՝

1	Վանաձորի գյուղատնտեսական քոլեջի մարզադահլիճի վերակառուցում	75,04
2	Վանաձորի Ներսիսյան թաղամասի թիվ 31 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ի շենքի կապիտալ հիմնանորոգում	60,0
3	Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղի հիմնանորոգում	25,0
4	ՀՀ գեղագիտական ազգային կենտրոնի Վանաձորի մասնաճյուղի հիմնանորոգում	19,8
5	Վանաձոր քաղաքի Խնձորուտ-Բազում թաղամասի գերեզմանոց տանող ճանապարհի և գերեզմանոցի նախահրապարակի ասֆալտապատում	61,0
6	Լոռու մարզի Կաթնաջուր-Շիրակամուտ 4կմ երկարությամբ ճանապարհի ասֆալտապատում	150,0
7	Սպիտակ քաղաքի Տեր-Սիմոնյան փողոցի ասֆալտապատում	80,0

Դպրոցների ֆինանսական միջոցների խնայողության հաշվին՝ ինչը կազմել է շուրջ 99,6 մլն դրամ, կատարվել են առաջնահերթ վերանորոգման աշխատանքներ խնայված ֆինանսական միջոցների սահմաններում՝ Վանաձորի թիվ 3, 4, 16, 20, 25, 30, Ստեփանավանի թիվ 2, 3, Ալավերդու թիվ 2, 12, Տաշիրի թիվ 1, 2, Աքրու, Ջրաշենի, Դսեղի դպրոցներում:

2015թ. նոյեմբերի 12-14-ը ուժեղ քամիներից տուժած Լոռու մարզի համայնքների կրած վնասների հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կառավարության 19.11.2015 թիվ 1361-Ն որոշումով Լոռու մարզպետարանին հատկացվել է 240.0 մլն. դրամ, որից

- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում՝ 74.7 մլն. դրամ – ինը համայնքներում (Վանաձոր, Ստեփանավան, Վարդաբլուր, Ալավերդի, Աքրի, Մղարթ, Չկալով, Ուռուտ, Բովաձոր համայնքներում դպրոցների տանիքների վերանորոգումներ)
- Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին՝ 58.5 մլն. դրամ
- Այլ նպաստներ բյուջեից՝ 102.7 մլն. դրամ

Նախագծահետազոտական ծախսեր՝ 4.0 մլն. դրամ:

Մարզում «ԳՏՏՁ ԾԻԳ» ՊՀ-ի կողմից (ԻՖԱԴ) 2012-2014թ. ընթացքում 2 համայնքներում իրականացվել է շուրջ **77.1 մլն** դրամի, իսկ 2015թ.-ի 3 համայնքներում իրականացվել է շուրջ 947.0 մլն դրամի աշխատանքներ (տես՝ **հավելված 7**):

❖ Արդյունքում լուծվել է Սպիտակ քաղաքային համայնքի Գր. Լուսավորիչ թաղամասի գազամատակարարման խնդիրը: Թաղամասն ամբողջությամբ գազաֆիկացվել է:

❖ Արդյունքում կառուցվել է Շիրակամուտ համայնքի գազաֆիկացման ներքին ցանցի համակարգը և 35 ընտանիքներ դարձել են բաժանորդ: Գազաֆիկացված է համայնքի 80%-ը (բնակչությունը՝ 2600 մարդ):

❖ Կվերակառուցվի Դսեղ համայնքի ջրամատակարարման համակարգի 26կմ-ի՝ 13.5կմ-ը, 2 ՕԿՋ-ներ: Լիովին կլուծվի համայնքի 860 տնտեսությունների ջրամատակարարման խնդիրը:

❖ Կվերակառուցվի Մեծ Այրում համայնքի (1204 բնակչություն՝ 310 բաժանորդ) ջրամատակարարման համակարգը, կկառուցվի խմելու ջրագծի արտաքին ցանց:

❖ Կբարելավվի Ճոճկան համայնքի 2125 բնակչության՝ 497 բաժանորդների, հասարակական և արտադրական օբյեկտների ջրամատակարարման համակարգը՝ 95%-ով:

2014թ. ՀՏՁՀ-ի միջոցներով իրականացվել է.

❖ Հաղպատ համայնքի միջնակարգ դպրոցի շենքի ուժեղացում, վերակառուցում, ջեռուցման համակարգի տեղադրում՝ 116.8 մլն դրամ: Հաղպատի համայնքի միջնակարգ դպրոցում սովորում է 89 աշակերտ:

❖ Ալավերդու հիվանդանոցի դիահերձարանի կառուցում՝ 76.6 մլն դրամ:

❖ Վահագնի համայնքի դպրոցի մարզադահլիճի կառուցում՝ 75.6 մլն դրամ: Դպրոցում սովորում է 115 աշակերտ:

❖ Եղեգնուտ համայնքի դպրոցի սպորտդահլիճի վերանորոգում, ջեռուցման համակարգի տեղադրում, տանիքի փոխարինում՝ 47.9 մլն դրամ: Դպրոցում սովորում է 112 աշակերտ:

❖ Ձորագյուղ համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգում՝ 15.6 մլն դրամ: Մանկապարտեզ հաճախող սաների թիվը՝ 15:

❖ Կառուցվել է Հարթագյուղ համայնքի (բն.՝ 1353 մարդ) նոր կենտրոն, որտեղ տեղակայված են գյուղապետարանը, մշակույթի տունը, գրադարանը, բուժկետը և նիստերի դահլիճը՝ 119.3 մլն դրամ:

❖ Կառուցվել է Արևաշող համայնքի (2799 մարդ) նոր կենտրոն, որտեղ տեղակայված են գյուղապետարանը, մշակույթի տունը, գրադարանը, բուժկետը և նիստերի դահլիճը՝ 125.6 մլն դրամ:

2015թ.-ին ՀՏՁՀ-ն գտնվել է վերակազմավորման գործընթացում, ուստի վերջինիս կողմից կապիտալ ծրագրեր չեն իրականացվել:

Մարզում առկա են 1566 բազմաբնակարան շենքեր՝ 38945 բնակարաններով, 2,078.8 հազ. քմ ընդհանուր մակերեսով: ՀՀ պետական ռեգիստրի տվյալներով մարզում գրանցված են 59 համատիրություններ, որոնք կառավարում են 970 շենք:

01.01.2016թ.-ի դրությամբ մարզում գազաֆիկացված են 64.118 բնակարաններ և առանձնատներ (կազմում է ընդհանուրի 77.7%-ը), այդ թվում՝ 38.945 բնակարաններից գազաֆիկացված է 29.777-ը (76.4%), 43.570 առանձնատներից գազաֆիկացված է 34.341-ը (78.8%):

Աղետի գոտու բնակավայրերում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրի ընթացքի մասին /կառուցապատող “Գլենդել-Հիլզ” ՓԲ Ընկերություն

Ծրագրի շահառու են ճանաչվել 1650 ընտանիք, որից Վանաձոր քաղաքում 22-ը, Սպիտակում՝ 249-ը, Ստեփանավանում՝ 47, 33 գյուղական բնակավայրերում 1332 ընտանիք:

2008-15թ.թ. իրականացված ծրագրերի շրջանակներում ծրագրի շահառու ճանաչված 1650 ընտանիքներից լուծվել է 1268 ընտանիքի բնակարանային խնդիրները, որոնցից Վանաձորում 8, Սպիտակում 199, Ստեփանավանում 47, 33 գյուղական բնակավայրերում՝ 1014:

ՀՀ Լոռու մարզի բնակավայրերում դեռեվս լուծված չեն ծրագրի շահառու ճանաչված 382 ընտանիքների բնակ.ապահովման խնդիրները, այդ թվում Վանաձորում 14, Սպիտակում 50/ 1 սենյակի հավակնող ընտանիքներ/, 33 գյուղական բնակավայրերում 318 ընտանիք:

ՀՀ Կառավարության 19.11.2015թ. թիվ 1363-Ն որոշմամբ ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացվել է 99 մլն. դրամ.որից 39,0 մլն.-ը՝ գյուղական բնակավայրերում 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետեանքով անօթեան մնացած եվ դատարանի վճռով իրենց իրավունքները վերականգնած 1 սենյակի շահառու ճանաչված 13 ընտանիքի բնակարանային պայմանների բարելավմանն ուղղակի ֆինանսական աջակցության տրամադրման եղանակով:

1.2. ՃԱՆԱՊԱՐՀԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ, ԵՆԹԱԿԱՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Մարզն ընդգրկում է 218.9կմ միջպետական նշանակության, 264.3կմ հանրապետական նշանակության և 407.9կմ մարզային (տեղական) նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային և 2,458կմ համայնքային նշանակության (կամ բնակավայրերի փողոցներ) ճանապարհներ:

2014թ.-ի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների, ընթացիկ ձմեռային և ամառային պահպանման և շահագործման աշխատանքների համար ծախսվել է 535.1 մլն դրամ՝ սպասարկվել է 906,54 կմ ճանապարհահատվածներ (որից՝ 476,2կմ - 415.8 մլն դրամ ամառային և 430,34կմ - 119.3 մլն դրամ ձմեռային պահպանման համար):

2014թ.-ի ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին 782.5մլն դրամ ընդհանուր գումարով հիմնանորոգվել են.

-Մ6-Թեղուտ – 3.7կմ երկարությամբ ճանապարհահատվածը՝ 553.0 մլն դրամ:

- Թեղուտ համայնքի 1.8կմ երկարությամբ ճանապարհահատվածը՝ 176.0 մլն դրամ:

- Մ6-Ձորագյուղ 4.4կմ երկարությամբ ճանապարհահատվածի գրունտավորում՝ (սելավի հետևանքների վերականգնում)՝ 48.8 մլն դրամ:

- Վանաձոր-Ալավերդի – 28.5կմ-ում 100զմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածի վերանորոգում՝ 4.7 մլն դրամ:

Ճանապարհաշինության բնագավառում 2014թ.-ի ՀՀ պետ. բյուջեի միջոցների հաշվին՝ 5-րդ հրատապ ծրագրի շրջանակներում, մարզի 11 համայնքներում իրականացվել են 436.8 մլն դրամի ճանապարհաշինական աշխատանքներ, ասֆալտապատվել է շուրջ 30 փողոց, շուրջ 19կմ ճանապարհ և 1 կամուրջ (տես՝ **հավելված 8**):

Ընդհանուր առմամբ՝ 2014թ.-ին ունեցած տվյալների համաձայն, մարզում ճանապարհաշինարարության բնագավառում ներդրումների ծավալը կազմում է 1.219.3 մլն դրամ:

2015թ.-ի մարզի միջպետական և հանրապետական նշանակության 891.1կմ երկարության ավտոճանապարհների համար ընթացիկ ամառային, ձմեռային պահպանման և սպասարկման համար հատկացվել է 550.3 մլն դրամ:

2015թ.-ի ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին 373.2 մլն դրամ ընդհանուր գումարով հիմնանորոգվել է 2,9կմ երկարությամբ Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհահատվածը, իսկ 3,9 կմ երկարությամբ ճանապարհահատվածը նախատեսված է ավարտել 2016թ-ին (արժեքը՝ 82.4մլն դրամ):

2015թ.-ի ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- մարզային ա/ճանապարհների պահպանում և շահագործում՝ 71.4 մլն դրամ:
- համայնքային նշանակության ա/ճանապարհների ասֆալտապատում և կամուրջների նորոգում՝ 162.5 մլն դրամ:

- հիմնանորոգվել է S-5-32-Կաթնաջուր 4կմ ավտոճանապարհի 1.8կմ ճանապարհահատվածը՝ 149.2 մլն դրամ:

- հիմնանորոգվել է Սպիտակ քաղաքի Տեր –Սիմոնյան փողոցը՝ 65.5 մլն դրամ:
- հիմնանորոգվել են Վանաձոր քաղաքի Խնձորուտ-Բազում թաղամասի գերեզմանոց տանող ճանապարհի մի հատվածը, գերեզմանոցի նախահրապարակը և այն գերեզմանոցին կապող ճանապարհահատվածները՝ 55.6 մլն դրամ:

2015թ-ին ՀՀ ֆինանսավորմամբ իրականացվել են Ագարակ-Օձուն-Մ-6 39,6կմ երկարության ճանապարհի վերակառուցման աշխատանքներ՝ 3.5 մլրդ դրամ:

ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի ֆինանսավորմամբ հիմնանորոգվել է Տաշիր-Գոգավան 6,8կմ ճանապարհահատվածը՝ 1.4 մլրդ դրամ:

«ՄԱՐԳԱՀՆՎԻՏ» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ՝ Մարգահովիտ համայնքի ճանապարհների նորոգում և ասֆալտապատում՝ 96.0 մլն դրամ:

Ընդհանուր առմամբ՝ 2015թ. ունեցած տվյալների համաձայն, մարզում ճանապարհաշինության բնագավառում ներդրումների ծավալը կազմում է **5,873.4** մլրդ դրամ:

2015թ.-ին մարզում ճանապարհաշինության ոլորտում իրականացվող աշխատանքների ուղղությամբ ներդրումների աճը 2014թ.-ի համեմատությամբ կազմում է (481.7%) շուրջ 4.8 անգամ:

Մարզում գործում են 67 ներմարզային և 28 ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիներ: Այդ երթուղիների սպասարկումն իրականացնում են 15 ավտոտրանսպորտային ձեռնարկություններ, որոնք շահագործում են 125 տրանսպորտային միջոցներ (ավտոբուսներ՝ 76, միկրոավտոբուսներ՝ 49):

Մարզում գործում է «Հարավկովկասյան երկաթուղու» Գյումրի-Այրում հատվածը՝ 13 կայարաններով:

Ներքաղաքային կանոնավոր փոխադրումներ իրականացվում են Վանաձոր, Ալավերդի և Սպիտակ քաղաքներում:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ ուղևորահոսքի սակավության, ոչ օրինական տրանսպորտի գործունեության և մրցակցության բացակայության պատճառներով ներմարզային հասարակական տրանսպորտի աշխատանքը դարձել է ոչ բավարար, որոշ երթուղիներ սպասարկվում են ոչ կանոնավոր, իսկ 13 երթուղիների սպասարկումից կազմակերպությունները հրաժարվել են (ոչ շահավետ լինելու պատճառով): ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, համայնքապետերի հետ համագործակցված քայլեր են ձեռնարկվում հասարակական տրանսպորտի աշխատանքը բարելավելու ուղղությամբ: Բավարար վիճակում է գտնվում միջմարզային հասարակական կանոնավոր երթուղիների աշխատանքը: Կանոնավոր սպասարկվում են Վանաձոր-Երևան, Ստեփանավան-Երևան, Տաշիր-Երևան եւ Ալավերդի-Երևան ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիները:

Ներքաղաքային երթուղիների սպասարկում իրականացվում են Վանաձոր, Ալավերդի և Սպիտակ քաղաքներում:

Մարզի համեմատաբար խիտ բնակեցված համայնքներում բնակչությունը հնարավորություն ունի բավարար որակով ընդունելու 10-ից ավելի հեռուստաալիք, իսկ որոշ բնակավայրերում ելնելով իրենց աշխարհագրական դիրքից դիտում են՝ 1-5 հեռուստաալիքներ:

1.3 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը կազմել է 251073.8 հա, որից

- վարելահող - 42 095.4 հա
- բազմամյա տնկարկներ - 418 հա
- խոտհարք - 35110.4 հա
- արոտ - 145664.1 հա
- այլ հողատեսքեր - 27785.9 հա

Մարզում ընդհանրապես ոռոգելի հողատարածքները կազմում են 9612.1 հա, հիմնականում ոռոգելի է Սպիտակի, Ստեփանավանի և Թումանյանի տարածաշրջանները:

Մարզում ընդհանուր ցանքը 2015թ.-ի կազմել է 31620.5 հա՝ նախորդ տարվա 28650.7 հա դիմաց (հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները աճել են 1800 հա-ով, բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները 116 հա-ով, կարտոֆիլի ցանքատարածությունները 262 հա-ով, մանրամասն տեղեկատվությունը՝ **հավելված 9**-ում): 2015թ.-ի մարզում բերքատու պտղի և հատապտղի տարածությունը կազմել է 2263 հա, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 19 հա-ով:

2015թ.-ի ցանքատարածությունների աճին զուգընթաց արձանագրվել է հացահատիկի և հատիկաընդեղենի, բանջարեղենի, կարտոֆիլի բերքի աճ, իսկ նվազել է՝ պտղի և հատապտղի բերքը (2015թ.-ի մարզում ստացված համախառն բերքն ու համեմատականը հանրապետական ցուցանիշների հետ բերված են **հավելված 10**-ում):

Գյուղատնտեսության աջակցման և ռեսուրսների զարգացման ծրագրեր. 2015թ.-ի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում համայնքների 858 շահառուների կողմից վճարվել և ձեռք է բերվել 80 տ. գարնանացան գարու, 5.7 տ. առվույտի և 17.1 տ. կորնգանի և 1.9 տ եգիպտացորենի սերմացուներ, որոնցով կատարվել է համապատասխանաբար 400 հա գարու, 228 հա առվույտի և 114 հա կորնգանի և 76 հա եգիպտացորենի ցանք (պահանջարկը բավարարված է):

«*Կառավարության 31.08.2015թ.-ի թիվ 1001-Ն որոշմամբ 2015թ.-ի աշնանացանի համար մարզին տրամադրվել է 403.4 տոննա ցորենի սերմացու՝ 2016թ.-ին աշնանը 64.544 մլն դրամ հավաքագրելու պայմանով: Սերմացուն հատկացվել է 33 համայնքների 791 շահառուների և կատարվել է 1332 հա ցանք: 2014թ.-ին հատկացվել է 350 տոննա սերմացու՝ 40 համայնքների 360 շահառուների և կատարվել է 1116 հա ցանք:*

Պետական աջակցության ծրագրով 2015թ.-ին մարզին հատկացվել

ազոտական պարարտանյութ - 2300 տոննա (ներկրվել է 2150.55 տոննա - հավաքագրվել է 240.120 մլն դրամ)

• կալիումական պարարտանյութ - 100 տոննա (ներկրվել է 53 տոննա - հավաքագրվել է 7.420 մլն դրամ)

• ֆոսֆորական պարարտանյութ - 100 տոննա (ներկրվել է 70.25 տոննա - հավաքագրվել է 9.835 մլն դրամ)

• դիզելային վառելանյութ – 1.300.000 լիտր դիզ. վառելանյութ (ներկրվել է 604.902 լիտր, հավաքագրվել է 211.715 մլն դրամ)

Գումարների հավաքագրումը ընթացքի մեջ է: Գյուղացիական տնտեսությունների կողմից ներկայացված վճարունակ պահանջարկն ամբողջությամբ բավարարված է:

01.01.2016թ. դրությամբ վերամշակող կազմակերպությունների կողմից մթերվել է 39 տոննա բանջարեղեն, 215 տոննա պտուղ՝ նախորդ տարի նույն ժամանակահատվածում մթերվել է 38.5 տոննա բանջարեղեն և 76.1 տոննա պտուղ (տես՝ **հավելված 11**):

Մարզի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: Այստեղ կենտրոնացված է հանրապետության խոշոր եղջերավոր անասունների շուրջ 11.8%-ը (81.0 հազար գլուխ տավար, որից 39.7 հազարը՝ կովեր), ոչխարների և այծերի՝ 5.1%-ը (38.3 հազար գլուխ) և խոզերի՝ 7.7%-ը (10.9 հազար գլուխ): 01.01.2015թ.-ի դրությամբ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 1.0%-ով, իսկ ոչխարների ու այծերի գլխաքանակը ավելացել է 1.1%-ով (*տես՝ հավելված 12*):

Մարզում 2015թ.-ի նոյեմբեր ամսին իրացվել է շուրջ 3.8 հազար տոննա (կենդանի զանգվածով) միս (աճը՝ 11.8%), արտադրվել է 4.2 հազար տոննա կաթ (աճը՝ 5.0%) և 1.8 մլն հատ ձու (80%) (տես՝ **հավելված 13**):

Մարզում «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում ընդգրկվել է 8 համայնք՝ Լորուտ, Աթան, Դսեղ, Շամուտ, Ահնիձոր, Քարինջ, Մարց, Մեծ Պարնի, որից 7-ում (բացի Մեծ Պարնի համայնքի) արոտների ջրարբիացման աշխատանքներն ավարտվել են, իսկ գյուղտեխնիկայի տրամադրման աշխատանքները ավարտվել են 6-ում՝ Աթան և Շամուտ համայնքներում գյուղտեխնիկայի տրամադրման աշխատանքներ նախատեսված չեն: Մեծ Պարնի համայնքում ներ է դրվել 132մլն 380 հազ. դրամ, որից՝ 70մլն 380հազ դրամը՝ գյուղ. տեխնիկայի, 62 մլն դրամը՝ ջրագծերի և ճանապարհների նորոգման աշխատանքների վրա:

8 համայնքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- կառուցվել է 7.15 կմ ջրարբիացման համակարգ, տեղադրվել է 27 հատ խմոց, որով ջրարբիացվել է ավելի քան 12,000 հա արոտ: Նշված բոլոր շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է շուրջ **295.2 մլն դրամ**:

- լրացուցիչ խոտի արտադրման նպատակով համայնքներում ստեղծված կոոպերատիվներին տրամադրվել է 42 միավոր գյուղտեխնիկա, որից 11 միավոր տրակտոր և 31 միավոր այլ գյուղգործիքներ: Տրամադրված գյուղտեխնիկայի ընդհանուր գումարը կազմել է շուրջ 171.5 **մլն դրամ**:

Ջրարբիացման համակարգերի կառուցման արդյունքում լիարժեք օգտագործելի են դարձել ոչ միայն նախկինում մասնակիորեն օգտագործվող շուրջ 7,000 հա արոտներ, այլև կենդանիների խմելու ջրի բացակայության պատճառով ընդհանրապես չօգտագործվող շուրջ 5,000 հա արոտավայրեր՝ յուրաքանչյուր հա-ից միջին հաշվարկով ստանալով 1.6 տոննա խոտի չոր զանգված՝ համաձայն ընդհանուր կերարտադրության դրույթների և անասնաբուժական նորմատիվների: *Արդյունքում՝ նշված տարածքից ապահովվում է շուրջ 3,280 տոննա կերամիավոր, որից ստացվում է շուրջ 4,100 տոննա կաթ՝ շուրջ 451.0 մլն դրամ կամ 547 տոննա քաշած (միս)՝ շուրջ 547.0 մլն դրամի:*

Կոոպերատիվներին գյուղտեխնիկայի տրամադրման արդյունքում՝ խոտհարքներից մսուրային շրջանի համար հավաքվել է տարեկան հավելյալ շուրջ 820 տոննա չոր խոտ, որը հավասարազոր է 336.2 տոննա կերամիավորի, որից ստացվում է մոտ 420 տոննա կաթ՝ շուրջ 63.0 մլն դրամ կամ 56 տոննա քաշած (միս)՝ շուրջ 56.0 մլն դրամի:

Ծրագրի շրջանակներում իրականացված ջրարբիացման աշխատանքների և գյուղտեխնիկայի տրամադրման արդյունքում ստացվում է միջինում տարեկան շուրջ 558.5 մլն դրամ եկամուտ: Համեմատելով մարզում կատարված ընդամենը ներդրումները՝ 403.5 մլն դրամ կամ շուրջ 1.1 մլն ԱՄՆ դոլար, ստացվում է, որ յուրաքանչյուր 1 ԱՄՆ դոլար ներդրումն ապահովել է տարեկան շուրջ 1.4 ԱՄՆ դոլար լրացուցիչ եկամուտ:

Ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների պարբերական մոնիտորինգի արդյունքում գրանցվել է կաթնատվության 20% աճ և շուրջ 15% քաշած:

Մարզի 8 համայնքում անասնապահության զարգացման համար հատկացված բյուջեն կազմում է **466.7 մլն դրամ**, որից **295.2 մլն դրամ** ջրարբիացման համակարգի կառուցման և **171.5 մլն դրամ** գյուղտեխնիկայի տրամադրման նպատակով (այդ համայնքներում անասնապահությամբ զբաղվող ծրագրի շահառուների թիվը կազմում է շուրջ 1,330 ֆերմերային տնտեսություն):

2015թ.-ի փետրվարից մեկնարկել է երկրորդ ծրագիրը, որի տևողությունն է 5 տարի և կավարտվի 31.05.2020թ.-ը:

Երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսվում է Լոռու մարզից ընդգրկել 12 համայնք: Նախատեսված 12 համայնքից 5-ում (Մարգահովիտ, Լուսաղբյուր, Լեռնանցք, Հարթագյուղ, Մեծավան) արդեն իսկ մեկնարկել են երկրորդ ծրագրի նախապատրաստական աշխատանքները:

Չնայած մարզում հաշվառված է 1663 տրակտոր, 107 հացահատիկահավաք կոմբայն, 690 տրակտորային կցասայլ, 397 տրակտորային խոտհնձիչ, 18 կերահավաք կոմբայն, 162 հավաքիչ-մամլիչ և այլ գյուղատնտեսական տեխնիկա, սակայն դրանց սարքինության մակարդակը՝ միջինը շուրջ 85.7%՝ հանրապետական միջինի՝ 82.5%-ի համեմատ (*տես՝ հավելված 14*):

«ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման ու հավաքակազմի աստիճանաբար նորացման աշխատանքների իրականացում» ՀՀ կառավարության 2013թ.-ի գերակա խնդրի լուծման շրջանակներում 13.06.2013թ. թիվ 588-Ն և 20.06.2013թ. թիվ 650-Ն որոշումների հիման վրա Բելառուսի Հանրապետությունից ներկրված «Բելառուս 82.1» մակնիշի տրակտորներից, որոնց իրացումն իրականացնում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամը (լիզինգային եղանակով): 2014թ.-ին ձեռք է բերվել 1 անիվավոր տրակտոր և 4 գյուղգործիք, իսկ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում 2014թ.-ին ձեռք է բերվել 11 տրակտոր, 31 գյուղգործիք: Ընդհանուր առմամբ 2014թ.-ին ձեռք է բերվել 12 անիվավոր տրակտոր, 35 գյուղգործիք: Մարզի համայնքների գյուղատնտեսական տեխնիկայի նորացումը հետևողականորեն շարունակվում է:

Մարզում դեռևս օրախնդիր է մնում հակակարկտային կայանների բացակայությունը:

Ամեն տարի մարզում ցանքերի հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները կազմում են շուրջ 13-14 հազար հեկտար, որոնք գտնվում են ռիսկային գոտիներում: Ամբողջ վեգետացիայի ընթացքում դիտվում են անընդհատ կարկտահարություններ, որի պատճառով գյուղացիական տնտեսություններին պատճառվում է զգալի վնաս: Ընդհանուր առմամբ մարզի 21 համայնքներում (Յաղդան – 1 հատ, Դսեղ – 1 հատ, Գարգառ – 2 հատ, Գյուլագարակ – 2 հատ, Վարդաբլուր – 2 հատ, Կուրթան – 1 հատ, Ագարակ – 4 հատ, Լեջան – 2 հատ, Կողես – 3 հատ, Մեծ Պարնի – 2 հատ, Օձուն – 2 հատ, Հազվի – 1 հատ, Ամրակից – 1 հատ, Արևածագ – 1 հատ, Այգեհատ – 1 հատ, Ծաթեր – 1 հատ, Կարմիր Աղեկ – 1 հատ, Մղարթ – 1 հատ, Դարպաս – 1 հատ, Մեղովկա – 1 հատ, Միխայլովկա – 2 հատ) տեղադրված են 33 հակակարկտային կայաններ: Ընդհանուր առմամբ առաջնային անհրաժեշտ է առնվազն 20 հակակարկտային կայանքի ձեռք բերումը (*հակակարկտային կայանքների համար անհրաժեշտ է շուրջ 80.0 մլն դրամ*):

Հողօգտագործում. 2015թ.-ին հողօգտագործման բնագավառում մարզպետարանն ուշադրություն է դարձրել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության տրամադրման գործընթացին, հողերի պահպանության աշխատանքների իրականացմանը: 01.01.2016թ.-ի դրությամբ մարզում վարձակալության տրամադրման համար նախատեսված համայնքային և պետական սեփականության 66312.8 հա գյուղ. նշանակության հողերից փաստացի վարձակալության է տրամադրվել 37,508.2 հա կամ **56.6%, այն դեպքում, երբ ընդհանուր հանրապետական/մարզային միջինը կազմում է շուրջ 36%:** Լոռում փաստացի վարձակալության հանձնված հողամասերի դիմաց գանձվել է 146.6 մլն դրամ, կատարողականը կազմել է 104.2% (վարձակալությամբ տրամադրված հողամասերի վերաբերյալ համեմատական տեղեկատվությունը՝ **հավելված 15-ում**):

2015թ.-ի ընթացքում մարզում օտարվել է 37.3 հա հողատարածք, որի արդյունքում ձևավորվել է շուրջ 78.8 մլն դրամ հասույթ (ՀՀ մարզում իրականացված հողերի աճուրդ-վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է **հավելված 16-ում**: Ներկայում հողերի

աճուրդների վերաբերյալ հայտարարությունները տեղադրվում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և <http://www.azdarar.am> հասցեում գտնվող ՀՀ-ն հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

1.4 ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳՎԱՌ

Ստորև ներկայացված են 2014-2015թթ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից մարզպետարանին և մարզային ենթակայության կազմակերպություններին ֆինանսավորված և 2016թ.-ին նախատեսված գումարները.

	2014թ. ֆինանսավորում (հազ. դրամ)	2015թ. ֆինանսավորում (հազ. դրամ)	2016թ. նախատեսված (հազ. դրամ)
ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի պահպանում	454063.7	571620.4	580934.6
Հանրակրթական ուսուցում	5881762.6	6235951.4	6416969.3
Ներառական կրթություն	166395.8	281184.0	369438.4
Հատուկ կրթություն	109017.7	115149.8	115765.1
Արտադպրոցական դաստիարակություն	0	0	0
Նախադպրոցական (կրթություն)	32930.7	41128.6	46120.1
Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում	7947.1	8311.8	198.1
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում	28357.8	38943.5	38943.5
Մանկավարժների և դպրոցական երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	278.1	278.1	278.1
Կրթական հիմնարկների եւ օբյեկտների շինարարություն	213903.8	144290.3	125000.0
Թանգարանային ծառայություններ	13195.1	16157.6	16288.8
Թատերական ներկայացումներ			
Մշակութային միջոցառումների իրականացում	3542.3	3542.3	3542.3
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից	114664.0	848128.5	0
Մարզային նշանակության ա/ճ-ների ընթացիկ ձմեռային պահպանում և շահագործում	69043.7	71400.0	75000.0
Պետական նշանակության ա/ճ-ների և) հիմնանորոգում	435892.5	270262.6	0
Պետական հիմնարկների աշխատողներին սոցիալական փաթեթից օգտվողներին հատուցում	520434.2	291616.3	304344.0
Այլընտրանքային աշխատանքային	0	3600.0	3870.0

ծառայողներին դրամական բավարարում			
Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին	396181.2	283102.1	0
Սուբվենցիաներ	0	0	0
Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին	0		0
Ընդամենը	8447610.3	9224667.3	8096692.3
Դոտացիա	3522096.5	3900826.5	4119702.2
Ընդամենը	11969706.8	13125493.8	12216394.5

Լոռու մարզպետարանի ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2014թ.-ի գլոբալ բյուջեի տարեկան ճշտված ծավալը կազմել է 3577.5 մլն դրամ, իսկ 2015թ.-ին կազմել է 3,717.8 մլն դրամ (103.9%-ը):

01.01.2016թ-ի դրությամբ մարզի համայնքների բյուջեների փաստացի մուտքերը նախատեսված 6,997,273.7 հազար դրամի դիմաց կազմել են՝ 6.994,295.7 հազար դրամ, (կատարողականը՝ 100.0%): 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ ընդամենը հավաքագրված եկամուտների ցուցանիշը աճել է 9.8%-ով կամ 626,419.0 հազար դրամով: ՀՀ համայնքների (ըստ մարզերի) բյուջեների եկամուտների հանրապետական ցուցանիշները ներկայացված են **հավելված 17-ում: Հավելված 18-ում** ներկայացված են ՀՀ քաղաքային համայնքների հողի հարկի և գույքահարկի ցուցանիշները: **Հավելված 19-ում** ներկայացված են ՀՀ համայնքների (ըստ մարզերի) աշխատավարձի գծով պարտքերի վերաբերյալ ցուցանիշները:

1.5 ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Լոռու մարզում գործում է 167 դպրոց, այդ թվում՝ 85-ը՝ միջնակարգ, 64-ը՝ հիմնական, 4-ը՝ հատուկ, 11 ավագ և 3 վարժարան: Վանաձոր քաղաքում գործում է մեկ արհեստագործական ուսումնարան՝ 13 խմբով (196 աշակերտ):

Լոռու մարզպետարանի տվյալների համաձայն՝ 2015-2016թթ. ուսումնական տարում մարզի 163 հանրակրթական դպրոցներում աշխատում է 3539 ուսուցիչ, այդ թվում 3060 կին և 479 տղամարդ: Ուսուցիչ-աշակերտ թվաքանակի հարաբերակցությունը 2014-2015թթ. ուսումնական տարում կազմել է 1/8.3, իսկ 2015-2016թթ. ուս. տարում՝ 1/8.4:

2015-2016թթ. ուսումնական տարում մարզի հանրակրթական հաստատություններում սովորում է 29,693 աշակերտ, որը 2014-2015թթ. ուսումնական տարվա համեմատ նվազել է 67 աշակերտով: 2015-2016թթ. ուսումնական տարում առաջին դասարան են հաճախել 3055 երեխա, իսկ 2014-2015թթ. ուս. տարում՝ 3061 երեխա: Դասարանների թիվը 2015-2016թթ. կազմել է 1744 (նախորդ տարվա համեմատ պակասել է 23-ով): Դասարանների նվազման միտումը պայմանավորված է ավագ դպրոցների կարգավիճակի փոփոխության հետ: Մարզում բոլոր երեխաները հաճախում են դպրոց:

Մարզում առաջնահերթ են համարվում նախադպրոցական կրթության և մատչելիության ապահովումը, հանրակրթության արդյունավետության բարձրացումը, դպրոցների նյութատեխնիկական բազայի, ուսումնաձրագրային և ուսումնամեթոդական նյութերի բարելավումը, մասնագիտական կրթության բովանդակության արդիականությունը և որակի բարձրացման խնդիրները: Մարզում առկա 64 նախադպրոցական հաստատությունների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է **հավելված 20-ում (2013թ-ին ՆԴՀ թվաքանակը՝ 66, երեխաների թիվը՝ 4304, իսկ 2014թ-ին՝ ՆԴՀ թվաքանակը՝ 64, երեխաների թիվը՝ 4451):**

1.6 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզի առողջապահական համակարգում գործում են 36 բուժաստատություններ՝ 31-ը՝ մարզպետարանի ենթակայության (16-ը՝ ՊՈԱԿ-ներ, 15ը՝ ՊՓԲԸ-ներ), դրանցից 5 բժշկական կենտրոն, 5 պոլիկլինիկա, 1 ինֆեկցիոն հիվանդանոց, 1 առողջության կենտրոն, 17 առողջության առաջնային պահպանման կենտրոններ, 1 Լոռու մարզային արյան փոխներարկման կայան, 1 Լոռու մարզային հոգեոնկոլոգիայի դիսպանսեր և համայնքային ենթակայության՝ 5 ՀՈԱԿ-ներ: Մարզում հիվանդանոցային մահճակալների թիվը (ներառյալ առողջության կենտրոնի մահճակալների թիվը) 490 է:

2015թ. մարզում առողջապահական ընկերությունների շենքային պայմանների բարելավման ուղղությամբ իրականացվել են մի շարք ծրագրեր մասնավորապես.

Ընթացքի մեջ են՝

- «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցման շարունակական աշխատանքները, որի ընդհանուր արժեքը կազմում է 4.6 մլրդ դրամ, որից ծննդատան մասնաշենքի արժեքն է 1.1 մլրդ. դրամ, մնացած մասնաշենքի արժեքը՝ 3.5 մլրդ: 2015թ.կատարվել են ավելի քան 950 մլն. դրամի աշխատանքներ:

«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում իրականացվում է տուբերկուլոզի բաժանմունքի վերանորոգում «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից: Ծրագրի արժեքը կազմում է 7891,3 հազ.դրամ:

-Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի կողմից տրամադրվել է «Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցման նպատակով՝ շուրջ 60 մլն. դրամ: Շինարարական աշխատանքները ավարտական փուլում են:

Ավարտվել են՝

- «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում սեփական միջոցներով կատարվել է մասնակի վերանորոգում մոտ 7 800.0 հազ. դրամի չափով:

- «Դիակոնիա» բարեգործական կազմակերպության կողմից «Դսեղի առողջության կենտրոն» ՓԲԸ-ին է տրամադրվել ավելի քան 3000.0 հազ. դրամ՝ հեռաբժշկության ներդրման նպատակով ձեռք են բերվել պլանշետներ և համակարգչային տեխնիկա:

- Վանաձորի «Գուգարք» ԿՊ ՊՓԲԸ-ն ձեռք է բերել բժշկական սարքավորումներ և գույք՝ 12170,0 հազ. դրամ ընդհանուր արժեքով, ՀՀ ԱՆ ԾԻԳ ՊՀ-ի կողմից տրամադրվել են բժշկական պարագաներ և գրասենյակային գույք՝ 1420.6 հազ. դրամ արժեքով:

- «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել նոր սոնոգրաֆիայի ապարատ և այլ սարքավորումներ՝ 6570,0 հազ. դրամ արժողությամբ, Կատարվել է ախտահանման 2 կաբինետների վերանորոգում՝ 1 662, 7 հազ. դրամ արժեքով: Ընդամենը 8232.7 հազ. դրամ:

- «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն իր միջոցներով ձեռք է բերել բժշկական սարքավորումներ՝ 1894,0 հազ. դրամ արժեքով, բարեկարգել է մուտքի աստիճանավանդակը, կառուցել է թեքահարթակ՝ 230,0 հազ. դրամ արժեքով: Ընդամենը 2124.0 հազ. դրամ:

- «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հիմնանորոգվելուց հետո սեփական միջոցների հաշվին լիզինգային ճանապարհով և շրջանակային համաձայնագրերով ձեռք է բերվել 22826,1 հազ. դրամի բժշկական սարքավորումներ: Ոչ բժշկական նշանակության ներդրումների չափը կազմել է՝ 3522,5 հազ. դրամ: Ընդամենը՝ 26348,6 հազ. դրամ:

- «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ձեռք է բերել բժշկական սարքավորումներ/ իմունոֆերմենտային վերլուծիչի հավաքածու, սթրես տեստային համակարգ, հոլտեռ մոնիտոր/՝ 11488,0 հազ. դրամ ընդհանուր արժեքով:

- «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցների հաշվին ձեռք է բերել շտապօգնության մեքենա և բժշկական սարքավորում՝ 7150,0 հազ. դրամ ընդհանուր արժեքով, կատարվել է պոլիկլինիկական մասնաշենքի մասնակի նորոգում՝ 200.0 դրամ արժեքով: Սեփական

միջոցներով կուսմետիկ վերանորոգվել է Ուրասարի ԲՄԿ-ն՝ 120.0 հազ.դրամ արժեքով, կատարվել է շտապօգնության ավտոմեքենայի կապիտալ վերանորոգում՝ 360.0 հազ. դրամ արժեքով: Ընդամենը 7.830.0 հազ. դրամ:

- «Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի նոր շենքի կառուցման աշխատանքները՝ ՀՀ ԱՆ ԾԻԳ-ի կողմից Համաշխարհային բանկի միջոցներով /շուրջ 60 մլն դրամ/:

- «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցների հաշվին ձեռք է բերել սարքավորումներ՝ 2050, 0 հազ. դրամ ընդհանուր արժեքով, մասնակի վերանորոգվել է ընկերության վիրահատական սրահը՝ 222.5 հազ. դրամ, և բարերարների հաշվին՝ մոտ 120.0 հազ. դրամ: Ընդամենը 2392.5 հազ. դրամ:

ՀՀ Լոռու մարզի Մեծավանի գյուղապետարանի կողմից հատկացված 160.0 հազ. դրամով ձեռք է բերվել վիրաբուժական արտածծիչ:

- «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով կատարել է կաթսայատան վերանորոգում, «Նարեկ» մասնաշենքի տանիքի մասնակի վերանորոգում, վլացքատան վերանորոգում, ծննդատան ջեռուցման համակարգի վերանորոգում, հիմնական մասնաշենքի ջրազծերի վերանորոգում՝ 12600,0 հազ. դրամ ընդհանուր արժեքով: Ձեռք է բերել բժշկական սարքավորումներ և համակարգչային տեխնիկա՝ 20483.0 հազ. դրամ ընդհանուր արժողությամբ: Ընդամենը 33083.0 հազ. դրամ:

- «Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից սեփական միջոցներով ձեռք է բերվել ԷՍԳ-ի նոր ապարատ 240,0 հազ.դրամ արժողությամբ, կատարվել է 192.0 հազ. դրամի կոյուղու մասնակի վերանորոգում: Ընդամենը 432.0 հազ. դրամ:

- «Լոռու մարզային հոգեենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ում սեփական միջոցներով կատարվել են մասնակի վերանորոգման և տեխնիկական հագեցման աշխատանքները՝ մոտ 1125.0 հազ.դրամ ընդհանուր արժողությամբ, ինչպես նաև 240.0 հազ. դրամ արժեքով հակահրդեհային պարագաներ, համակարգչային հավաքածու 475.0 հազ. դրամ արժեքով: Ընդամենը 1840.0 հազ. դրամ:

- «Մարգահովիտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ում փոխարինվել է շենքի դրսի դուռը, Կառուցվել է թեքահարթակ և այլ շինարարական աշխատանքներ՝ 160.0 հազ. դրամ արժողությամբ:

- «Ջրաշենի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը իր միջոցներով ձեռք է բերել ԷՍԳ-ի սարք՝ 250.0 հազ. դրամ արժեքով:

- «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը իր միջոցներով կատարել է մասնակի վերանորոգում՝ 301.0 հազ. դրամ, գույք՝ 200.0 հազ. դրամ արժեքով: «Թեղուտ» ՓԲԸ-ի միջոցներով վերանորոգվել է ամբուլատորիայի ջրամատակարարման համակարգը և կոյուղին:

- Մարզի հինգերորդ հրատապ ծրագրի շրջանակներում վերանորոգվել է «Արևածագի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի կազմում գործող Կարմիր Աղեգու ԲՄԿ-ի սենյակը:

Այսպիսով, Լոռու մարզի առողջապահական ընկերությունների սեփական միջոցներով և «Լոռու առողջապահություն» հիմնադրամի օժանդակությամբ կատարվել է ընդհանուր առմամբ մոտ 113960.0 հազ. դրամի ներդրում:

- Առողջապահական ԾԻԳ ՊՀ-ի կողմից առաջնային օղակի բոլոր առողջապահական ընկերություններին տրամադրվել են համակարգչային հավաքածուներ՝ յուրաքանչյուրը 373.3 հազ. դրամ արժողությամբ և բժշկական պարագաներ՝ ընդամենը 12992.9 հազ. դրամ:

- Մի շարք առողջապահական ընկերություններում՝ «Ալավերդու ԲԿ», «Ստեփանավանի ԲԿ», «Տաշիրի ԲԿ», «Կուրթանի ԱԱՊԿ», «Աքրու ԱԱՊԿ», «Օձունի բժշկական ամբուլատորիա», «Արևածագի ԱԱՊԿ», «Գարգառի ԱԱՊԿ», «Գյուլագարակի ԱԱՊԿ», «Վարդաբլուրի ԲԱ», «Ագարակի ԱԱՊԿ», «Ախթալայի ԱԿ», «Ճոճկանի ԲԱ», «Վորլո Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից ստեղծված ծնողական կրթության կենտրոնները ամբողջությամբ կահավորվել են: Ընդհանուր վերանորոգումների արժեքը կազմել է 4794.3 հազ. դրամ, կահավորման և համակարգչային տեխնիկայով հագեցման արժեքը՝ 10359.8 հազ. դրամ: Ընդամենը 15154.1 հազ. դրամ:

- Այսպիսով՝ միջազգային կազմակերպությունների, բարերարների կողմից կատարվել է շուրջ 27045.4 հազ. դրամի ներդրում:

2000-2015թթ. ընթացքում Համաշխարհային Բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում մարզում հիմնանորոգվել և կառուցվել են ընդհանուր առմամբ 17 համայնքային բուժհաստատություններ (կառուցում՝ 7 և հիմնանորոգում՝ 10): Ամբուլատորիաներ են կառուցվել Ճոճկան, Ախթալա, Օձուն, Վարդաբլուր, Ջրաշեն, Արևաշող և Լեռնապատ, ՌԻճուտ համայնքներում: Շնող, Արևածագ, Աբրրի, Թումանյան, Մարգահովիտ, Ագարակ, Գյուլագարակ, Մեծավան, Վահագնի և Շահումյան համայնքներում հիմնանորոգվել են առկա շինությունները:

Ընդհանուր առմամբ 2013-2015թթ. վարկային ծրագրերով մարզի ամբուլատոր պոլիկլինիկական օղակում կատարվել է շուրջ 717.4 մլն դրամի չափով ներդրում:

Մարզի բուժհաստատություններում աշխատող բժիշկների ընդհանուր թիվը 423, միջին բուժանձնակազմի թիվը՝ 1007: 2014թ.-ի համեմատ բժիշկների ընդհանուր թիվը չի ավելացել, իսկ բուժանձնակազմի թիվը՝ պակասել է 12-ով: Մարզի ամբուլատոր համակարգն ապահովված է բժշկական և բուժքույրական կադրերով: Հիվանդանոցային ծառայությունը կարիք ունի մի շարք մասնագետների՝ նյարդաբան, նեոնատոլոգ, անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, մանկական ռեանիմատոլոգ, մանկական անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, հեմոդիալիզի բժիշկ, ֆթիզիատր, հոգեբույժ, նարկոլոգ, մանկաբարձ-գինեկոլոգ, վիրաբույժ, վնասվածքաբան, ուրոլոգ, քիթ-կոկորդ-ականջաբան, սրտաբան, ռենտգենոլոգ, սոնոգրաֆիստ, մաշկավեներաբան, ախտաբանաախտոմ, մանկաբույժ:

Մարզում առկա է 29 շտապ օգնության մեքենա, որից 1-ը՝ ռեանոմոբիլ, 7-ը՝ «Ֆորդ-տրանզիտ», 9-ը՝ «Գազել», 12-ը՝ «ՌԻԱՁ»: Բոլորն էլ բավարար ֆունկցիոնալ վիճակում են: Մարզին անհրաժեշտ է 1 մանկական ռեանոմոբիլ և 7 շտապօգնության մեքենաներ:

2014թ. մարզում գրանցվել է 3211 ծնունդ, 2015թ՝ 2931 ծնունդ: 2014թ. գրանցվել է մինչև 1 տարեկան երեխաների 7 մահ, իսկ 2015թ. ընթացքում՝ 8 մահ: 2014թ.-ի և 2015թ.-ի մայրական մահացությունը՝ 0:

Դեղորայքային ապահովվածությունը բավարար է: Ս/թ մարտ ամսից սկսած «Ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկում և կանխարգելում» ծրագրի շրջանակներում կատարվել է գյուլկոզայի հետազոտություն 23723 մարդ, պապ-քսուր՝ 9168 մարդ, արյան գերճնշման հետազոտություն՝ 28445 մարդ: Սոց. փաթեթով նախատեսված շահառուների 97.2 %ը հետազոտվել են մարզի բուժհաստատություններում:

Սոցիալական ապահովություն. Մարզում բնակվում են 50,602 կենսաթոշակառուներ, 17,833 հաշմանդամներ, 453ը՝ զոհված ազատամարտիկների և 15 անհայտ կորած անձանց ընտանիքներ, 7773-ը՝ փախստական ընտանիքներ, որոնց հիմնական մասը ստացել է ՀՀ քաղաքացիություն, բռնի տեղահանվածներ՝ 6000: Մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սոցիալական աջակցության նպատակով նախատեսված 30 մլն դրամ ֆինանսական միջոցները Լոռու մարզպետի որոշումներով տրամադրվել է մարզի 32 համայնքների 609 ընտանիքների, ընդհանուր արժեքը 18,694 մլն դրամ:

Մարզում խոցելի խմբերի թվաքանակի տվյալները 2014թ. և 2015թ. կտրվածքով

	Վանաձորի ՍԱՏԲ	Սպիտակ ՍԱՏԳ	Ստեփանավան ՍԱՏԳ	Թումանյան ՍԱՏԳ	Տաշիր ՍԱՏԳ	Ընդամենը մարզում
Ընտանեկան նպաստ (2014թ.)	4,820	3,774	3,977	1,088	1,087	14,746
Ընտանեկան նպաստ(2015թ.)	4,970	3,802	4,018	1,154	1,121	15,065
Սոցիալական նպաստ (2014թ.)	2,126	1,043	837	612	379	4,996
Սոցիալական նպաստ (2015թ.)	2,244	1,077	805	626	382	5,134
Գրանցված գործազուրկների	4,275	720	2,012	971	351	8,329

թիվը (2014թ.)						
Գրանցված գործազուրկների թիվը (2015թ.)	5,558	1,422	2,020	1,398	330	10,728

2014թ-ին Գործազրկության մակարդակը տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ կազմում է 16.9%:

1.7. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2015թ.-ին մարզում գործում է 8 արվեստի, 3 գեղարվեստի, 1 պարարվեստի, 9 երաժշտական դպրոցներ, Գեղագիտության ազգային կենտրոնի Վանաձորի մասնաճյուղ, 1 արվեստի պետական քոլեջ, 5 մշակույթի պալատ, 42 մշակույթի ակումբ, 2 մշակույթի և ժամանցի կենտրոն, 1 ռուսական մշակույթի տուն, 10 թանգարան, որից 4-ը՝ տուն-թանգարաններ, 1-ը՝ երկրագիտական, 2-ը՝ կերպարվեստի, 3-ը՝ կենցաղի, 63 գրադարան, որոնցից մեկը՝ Լոռու մարզային, իսկ 16-ը՝ քաղաքային /այդ թվում, 5-ը՝ մանկական/, 47-ը՝ գյուղական գրադարաններ են: 2014-15թթ-ներին գրադարանների ընթերցողների և թանգարաններ հաճախողների թիվն աճել է:

Մշակութային գործունեության վերաբերյալ

(հազար մարդ)

	2014թ.	2015թ.
Գրադարան այցելուների թիվ	299.625	324.445
Թանգարաններ այցելուների թիվ	26.657	28.554

2015 թ. կազմակերպվել և համակարգվել են պետական, ազգային և այլ տոներ, հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումներ: Այդ թվում՝ Հայոց բանակի կազմավորման 23-րդ տարելից, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, Առաջին Հանրապետության տոնի և Ղարաքիլիսայի հերոսամարտին, Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ և Շուշիի ազատագրման 23-րդ տարեդարձին, ՀՀ Անկախության 24-ամյա հորեյանին և Սահմանադրության օրվան, 1988թ.երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին և այլն:

«Պետական աջակցություն մշակութային միջոցառումներին» ծրագրի շրջանակներում կազմակերպվել և անցենկացվել՝

Մայրության և գեղեցկության տոնին նվիրված հանդիսություն, «Ազգային նվազարանների երգի-պարի, ասմունքի» ամենամյա Լոռու մարզային փառատոն, «Լոռվա հարսանիք» հանդիսություն Արևաշող և Ստեփանավան համայնքներում, «Վարդավառ» հանդիսությունը Գյուլագարակ համայնքի «Հեքիաթ» հանգստյան գոտու տարածքում, «Լոռի-Արցախ» մշակութային միջոցառումը:

Բազմաթից այլ միջոցառումների թվում են՝ «Երգում ենք Կոմիտաս» համահայկական փառատոնը:

«Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների 10-րդ միջազգային փառատոն

ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո անցկացվող «Ասմունքի հանրապետական մանկապատանեկան 9-րդ մրցույթ-փառատոն»-ի նախնական և եզրափակիչ փուլերը:

Արարատի մարզում «Մենք ենք, մեր մարզը» մանկապատանեկան մարզային մշակույթի օրերի իրականացման վերաբերյալ իրենց մասնակցությունն են ունեցել Վանաձորի, Ալավերդու, Ստեփանավանի շնորհալի պատանի երաժիշտ կատարողները:

Ախթալա համայնքում Կազմակերպվել է ավանդույթ դարձած «Խորովածի տոն 2015» մրցույթ-փառատոնը:

Լոռու մարզի տարածքում գործում է 18 մարզադպրոց՝ Վանաձորում, Ալավերդում, Սպիտակում, Տաշիրում, Ստեփանավանում, Գուգարքում, Ջրաշենում: Վանաձորում գործում են նաև «Վանաձորի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ «Գագիկ Ղազարյան» մարզական ակումբը, «Աշխատանքային ռեզերվներ» ՄՀԿ-ն, «Հայաստան» ՄՀԿ-ն, «Վազգեն Բադալյան» և «Լոկոմոտիվ» մարզական միությունները:

Վերջին 5 տարիների ընթացքում կառուցվել է Ստեփանավանի մարզադպրոցի նոր շենքը, վերակառուցվել են Վանաձորի ՕՍՄՄԴ և ձմեռային ձևերի մարզադպրոցները, «Հայաստան» ՄՀԿ-ում (մասնակիորեն փոխվել է դահլիճի հատակը, կատարվել են ներքին հարդարման աշխատանքներ, շրջակա տարածքի ասֆալտապատման աշխատանքներ - շուրջ 5 մլն դրամ):

Մարզի մարզիկները վերջին տարիներին հասել են լուրջ հաջողությունների.

1. Եվրոպայի սամբոյի մեծահասակների չեմպիոն:
2. Եվրոպայի սամբոյի երիտասարդների և պատանիների չեմպիոն և մրցանակակիրներ:
3. Համահայկական 6-րդ մարզական խաղեր - 18 մեդալ/ 6 ոսկե, 8 արծաթե և 4 բրոնզե/:
4. Մի շարք միջազգային խոշոր ստուգատեսներում հաղթողներ և մրցանակակիրներ:
5. ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> հաշմանդամ ունեցող ընտանիքը գրավել է առաջին տեղ:
6. ՀՀ անկախության 24-րդ տարելիցին նվիրված ամենամյա դպրոցականների մարզական խաղերի - 4 առաջին տեղ:
7. <<Բազե-2015>> երիտասարդական հավաք, - երրորդ տարին անընդմեջ հավաքի լավագույն ջոկատ: 2015 թվականին սպորտի և երիտասարդության ոլորտներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

❖ Սեպտեմբեր ամսին կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն հաշմանդամ մարզիկ>> մրցույթի Լոռու մարզային փուլը: Հանրապետական մրցումներում Լոռու մարզի թիմը ընդհանուր հաշվարկով գրավեց 2-րդ տեղը:

❖ Հոկտեմբերին կազմակերպվել են ավագ տարիքի *դպրոցականների ամենամյա ռազմա-մարզական խաղերի դպրոցական, տարածքային և մարզային փուլերը*: Վանաձորի թիվ 13 ավագ դպրոցի թիմը հանրապետական եզրափակիչ փուլում գրավել է 1-ին տեղ՝ հռչակվելով հանրապետության չեմպիոն:

Հոկտեմբեր ամսին ամփոփվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական համայնք>> և <<Լավագույն մարզական բակ>> հանրապետական մրցույթների համար ներկայացված հայտերը: <<Լավագույն մարզական համայնք>> անվանակարգում երկրորդ տեղ է գրավել Լոռու մարզը ներկայացրած Ալավերդի համայնքը, <<Լավագույն մարզական բակ>> անվանակարգում երկրորդ տեղ է գրավել Ախթալա համայնքի <<Բերուտ> թաղամասի մարզական բակը:

1.8. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Լոռու մարզի անտառային պետական ֆոնդը կազմում է **101205** հա, որից անտառածածկ է **85799** հա: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը: Մարզի անտառների կառավարումն իրականացնում են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 7 անտառտնտեսություններ՝ Գուգարք, Եղեգնուտ, Լալվար, Զիլիգա, Դսեղ, Տաշիր և Ստեփանավան:

«Թեղուտ» ՓԲԸ-ն 2009-14թթ. ընթացքում մասնագիտացված ձեռնարկությունների միջոցով կատարել է 220 հա համայնքային (73 հա՝ Լեռնահովիտ, 50 հա՝ Թեղուտ, 50 հա՝ Արջուտ, 30 հա՝ Օծուն, 17 հա՝ Շնող) և 158.5 հա պետական անտառային ֆոնդի տարածքների վրա ցանկապատման, լրացման և խնամքի աշխատանքներ: 2015թ. «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում իրականացվել է 61.2 հա անտառտնկում: Նույն ծրագրով նախատեսվում

է 180 հա պտղատու այգիների հիմնման աշխատանքներ իրականացնել Շնող և Թեղուտ համայնքներում: 2015թ. աշնանը Շնող համայնքում իրականացվել են շուրջ 10 հա պտղատու այգիների հիմնում (արքայանարինջ 6.2 հա, կեռաս 1.9 հա, խնձոր 1.4 հա, դեղձ 0.5 հա): 2016թ. նախատեսվում է ևս 10 հա պտղատու այգիների հիմնում:

Ընդհանուր առմամբ 2015թ. ընթացքում մարզում իրականացվել է շուրջ 104.6 հա անտառտնկման և նախորդ տարիներին հիմնադրված 930 հա անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ: Իրականացվել են նաև 38 հա տարածքի ցանկապատման և նախկինում կառուցված ցանկապատի վնասված հատվածների վերանորոգման աշխատանքներ:

2015թ. պլանային և այլ հատումները կազմել են 11282մ³, այդ թվում Թեղուտի հանքավայրի շահագործման նպատակով իրականացված հատումները՝ 4360մ³:

2015թ. ընթացքում մթերվել է 10954 մ³ թափուկ վառելիքայտ:

Մարզի տարածքում հանքարդյունահանման աշխատանքներ են իրականացնում շուրջ 35 կազմակերպություններ, որոնցից 5-ը իրականացնում են մետաղական հանքավայրերի շահագործում (Ալավերդու, Շամլուղի պղնձի, Թեղուտի պղինձ-մոլիբդենային և Մղարթի ու Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը):

Առաջարկություն էր ներկայացվել ՀՀ բնապահպանության նախարարություն, որպեսզի Լոռու մարզի Ստեփանավան, Ուրասար, ինչպես նաև Թեղուտ և Շնող համայնքները նույնպես ընդգրկվեն վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկում ու բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար պետական բյուջեից սահմանված կարգով ստանան մասնահանումներ: Ներկայումս տվյալ նախագիծը գտնվում է քննարկման փուլում:

ՀՀ պետական բյուջեի կողմից 2011-2015թթ. բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին տրամադրված գումարների վերաբերյալ տվյալները հետևյալն են.

հազ. դրամ

Համայնքներ	Տարիները				
	2012	2013	2014	2015	2016 – նախատեսված
Ալավերդի	94 411.5	110 000.0	120 000.0	94 097.0	--
Հաղպատ	23 602.8	25 000.0	27 000.0	27 081.1	--
Օձուն	23 602.9	58 664.8	12 498.4	7 403.5	47 918.2
Աքորի	23 602.8	28 000.0	30 000.0	20 173.5	--
Հազվի	8 000.0	50 000.0	30 000.0	-	--
Ախթալա	1 500.0	3 500.0	4 500.0	-	4 588.2
Ընդամենը	174 720.0	275 164.8	223 998.4	148 755.1	52 506.4

Ընթացքի մեջ է «Կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման» ծրագիրը: Ծրագիրը ենթադրում է Լոռու մարզում կառուցել եվրոպական չափանիշներին համապատասխան 3 աղբավայրեր, որոնք կսպասարկեն Լոռու մարզն ամբողջությամբ: Նոր աղբավայրերի շահագործմանը զուգընթաց կլուծվի նաև համայնքներում տարերայնորեն առաջացած ապօրինի աղբավայրերի լիկվիդացման հարցը

2015թ. Ալավերդու քաղաքապետարանի կողմից անց է կացվել մկնդեղի գերեզմանոցի անվտանգությունն ապահովող միջոցառումների համար նախագծա-նախահաշվային աշխատանքների իրականացման մրցույթ: Նախագծա-նախահաշվային աշխատանքներն իրականացնելուց հետո կկազմվի գործողությունների ծրագիր, որը կներակայացվի համապատասխան գերատեսչություններին և միջազգային դոնոր կազմակերպություններին՝ տվյալ հիմնախնդրի լուծման համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելու համար:

1.9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ, ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Լոռու մարզում գործում են ավելի քան 115 արտադրական և 1436 առևտրային ձեռնարկություններ: Խոշոր արտադրական ձեռնարկություններից են «Թեղուտ» ՓԲԸ, «Էյ Սի Փի ՓԲԸ, «Սագամար» ՍՊԸ, «Ախթալա» ՓԲԸ, «Ատ ԳՐԵՅՆ» ՍՊԸ, «Գլորիա կարի փաբրիկա» ՍՊԸ, «Դուստր Մելանյա» ՍՊԸ եւ այլ:

2014թ.-ին մարզի արդյունաբերական կազմակերպություններում, առևտրի և սպասարկման ոլորտի ձեռնարկություններում աշխատում է շուրջ 12500 մարդ, որից արդյունաբերության ոլորտում զբաղվածների թիվը կազմում է շուրջ 5365 մարդ, իսկ առևտրի և սպասարկման՝ շուրջ 7135 մարդ:

2015թ.-ին մարզի արդյունաբերական կազմակերպություններում, առևտրի և սպասարկման ոլորտի ձեռնարկություններում աշխատում է շուրջ 14814 մարդ, որից արդյունաբերության ոլորտում զբաղվածների թիվը կազմում է շուրջ 7438 մարդ, իսկ առևտրի և սպասարկման՝ շուրջ 7386 մարդ:

Փոքր և միջին բիզնեսին աջակցելու նպատակով 2014թ.-ի ընթացքում ֆինանսական աջակցություն են ստացել առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 18 սկսնակ գործարար: Ստացված վարկերի ընդհանուր գումարը կազմել է 107,909 մլն դրամ: Ֆինանսական աջակցությունը տրվել է Հայաստանի ՓԽԶ ՁԱԿ հիմնադրամի կողմից:

2014թ.-ի վերջին մարզում շահագործվել է Թեղուտ ՓԲԸ-ն, որի աշխատողների թիվը կազմում է շուրջ 1200 մարդ:

Լոռու մարզի զբաղվածության կենտրոններում 2015թ.-ի սեպտեմբերի վերջի դրությամբ հաշվառված աշխատանք փնտրողները կազմում են 11,128 մարդ, որոնցից գործազուրկների թիվը կազմում է 10,691 մարդ:

Աշխատուժի առաջարկն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2015թ. օգոստոսի վերջի դրությամբ

	Աշխատանք փնտրողներ (հազար մարդ)		որոնցից՝ գործազուրկներ (հազար մարդ)	
	Ընդամենը	նրանցից՝ երիտասարդներ	Ընդամենը	նրանցից՝ երիտասարդներ
Ընդամենը	88850	22376	76471	19158
ք. Երևան	16902	3082	14623	2602
Արագածոտն	4707	1110	3430	857
Արարատ	6297	1453	5572	1285
Արմավիր	5745	1488	4754	1315
Գեղարքունիք	7423	1880	6731	1777
Լոռի	11128	2923	10691	2802
Կոտայք	8770	2042	7464	1784
Շիրակ	15231	4771	12868	3875
Սյունիք	4864	1127	4636	1062
Վայոց ձոր	1822	478	1118	304
Տավուշ	5961	2022	4584	1495

Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2015թ.

	Անվանական միջին աշխատավարձ՝ դրամ		2014թ. նույն եռամսյակի նկատմամբ, %	
	I եռամսյակ	II եռամսյակ	I եռամսյակ	II եռամսյակ
Ընդամենը	175,565	180,864	111.0	110.4
ք. Երևան	188,999	195,707	109.5	110.2
Արագածոտն	123,602	125,352	111.5	111.2
Արարատ	141,028	145,072	112.6	111.5
Արմավիր	147,859	152,298	110.2	110.0
Գեղարքունիք	140,835	138,691	114.7	111.7
Լոռի	147,867	150,167	119.4	116.9
Կոտայք	154,508	159,098	112.4	107.8
Շիրակ	128,375	128,629	113.9	110.0
Սյունիք	207,630	212,936	109.2	102.1
Վայոց ձոր	141,864	142,121	120.2	115.1
Տավուշ	139,308	137,693	114.2	111.8

2015թ-ի 9 ամսվա արդյունքներով մարզի միջին ամսական աշխատավարձը կազմել է 152,720դրամ, 2014թ-ի 140,995դրամի դիմաց, աճը՝ 108,3%:

Մանրաձախ առևտրի շրջանառությունը 2014թ.-ին մարզում կազմել է 22,607.1 մլն դրամ, իսկ 2013թ.-ին՝ 23,281.4 մլն դրամ: 2015թ.-ի ինը ամսում մանրաձախ առևտրի շրջանառությունը կազմել է 29,150.2 մլն դրամ, աճը կազմել է 176.2%: Աճը նվազել է մատուցված ծառայությունների ծավալում. 2014թ.-ին ծավալը կազմել է 15,746.2 մլն դրամ, իսկ 2013թ.-ին՝ 15,844մլն դրամ (տարեցտարի աճում են մարզի հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակը, ինչպես նաև նրանց զբաղվածությունը՝ մահճակալ/օրերի քանակով չափված): Ծառայությունների ծավալի գինը 9 ամսում կազմել է 12776,3 մլն դրամ, աճը 2014թ-ի նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 107.8%: